

Սիրովնի եւ զծաղիկ եկեղեցւոյ եւ զպսակն ամենայն դիտնական եւ վարժ վարդապետաց, զերեքերանեան զՏէր Ստեփանոս, մականուն Տիրացու, մեծաւ թախանձանաւ եւ զովասանական նամակաւ ի հոգեւոր Տեառն Գրիգորիսէ կոչեցեալ լինէր ի Կլայն, զոր Հոռոմ կոչեն. եւ նորա հնազանդեալ հոգեւոր հրամանացն, ոչ դարձեալ ընդդէմ կամ պատճառեալ զծեւութիւն կամ զինչ եւ իցէ, այլ որպէս վայել էր իւրում զուարթ եւ զուարճածաղիկ ալեացն, խլու եւ հպատակ եղեւ վեհին, եւ սիրալիր կոչողին, յուզի անկեալ պատրաստեցաւ առաջիկա ճանապարհին, ընդ իւր տարեալ եւ զիս: Եւ զբաղում աւթեմանաւ զանց արարեալ հասաւ ի բաղձալին, եւ ի տեսանէն զիրեարս մոռացաւ զաշխատութիւն: Եւ ի լինելն անդ, ետես զգիրքս զայս եւ փափաղեաց, որպէս ընդդէմ ծաղկանցն՝ զործողն քաղցր եւ ախորժ ճաշակացն, սապէս եւ հայրս իմ ըստ հոգւոյ հրաման (յ)եաց շարա(յ)րել ի քարտիղի զտեսիլ մաքրեցելոյն ի Կրական ախտից որ ի մեզ, եւ զԿաթողիկէիցն թուղթ, զոր բացայայտեալ էր իմաստուն եւ հանճարեղ... եւ զՊատմութիւն սրբոյ վկա(յ)ին Քրիստոսի, Սարգսի զաւրաւարի: Եւ ի շարադրելն իմում անդ, զայլն առ իս այլք ումանք, եւ հոգաբարձու եղեալ առ իս աւելնել կամեցեալ, զրէին եւ նոքա, որպէս երեւիր:

Եւ զինի աւուրց ա'յլ ճանապարհ առաջի եղաւ իմում տեսնաւ եւ կաթողիկոսին Հայոց. զի կոչեցեալ եղեն ի Լեւոնէ, որ այժմ զվաղընջուցն ի մերմէ ազգէս եւ զընկեցեալն յերեսաց տեսողէն՝ զթագաւորականն անունն, զոր ունէին Հայք, սա միայն ստացաւ զաւգոստական եւ զծիրանափայլ պատմութեանն, եւ ընկալաւ աւճումն որպէս զմեծն Տրդատ, կամակցութեամբ արեւական ազգին Յոնաց, բերեալ նմա նշան զխաչանիչ թագն: Եւ նորա պատուասիրաբար կոչեցեալ զհոգեւոր Տէր Գրիգորիս, զի երթիցէ եւ աւծցէ զնա սրբարար եւ մաքրագործած միւռոնաւն, եւ պսակեացէ զլուսն խաչանշան զրոշ-

մաւ: Եւ հոգեւոր Տէրն ընդ իւր տարեալ զիմ տէրն՝ յաղագս անհատ զիտութեանն եւ կատարեալ իմաստութեանն եւ անարատ մաքրութեանն եւ հռչակաւոր եւ բարի անուանն, որ ի սղա(յ)կան տիոցն մինչ ի կատարեալ ծերութիւն՝ առ զուրս իմաստութեան գեղերեալ՝ ըստ աստուածայնոյն Սոգոմոսին խրատուն՝ թէ «լաւ է իմաստութիւնն քան զոսկի եւ քան զամենայն մեծութիւնս երկրաւորս» եւ դարձեալ յաճախէ զասելն՝ թէ «ի բովանդակ կեանս քո ստացիր զնա»: Է՞ր վասն. «զի առ զբունս հրաւրաց յաճախէ, եւ ի հրապարակս համարձակութիւն բերէ»: Որպէս արդիւնական վարդապետս իմ եւ տէրս իմ, որպէս զարեգակն փայլեալ ի մէջ իւրոց նմանեացն, զի զոր աւրինակ յաստեղս արեգակն, սապէս եւ ի բնաւ իմաստունս երեւեալ:

Զի այս զգալի արեգակնս զտեսնելի աշխարհս լուսաւորէ, իսկ սա զհոգի եւ զմարմին առ հասարակ ճառագայթած եւ յաւրինէ. այս արեգակն զբոյս եւ զտունի ատուքացուցանէ, իսկ սա զմտաւոր եւ զիշխանականն առ երկնիւքն բարձրացուցանէ. այս արեգակն զժախտահոտ եւ զխոնավուտ վայրս սարաւատեալ ցամաքեցուցանէ, իսկ սա զնեխութիւնն եւ զազտեղութիւն հոգւոց եւ մարմնոց՝ հրացայթ եւ լուսատեալ զործէ. այս արեգակն առ երկրաւորս ճանապարհ անմոլար տանի, իսկ սա զմոլորեալս յուշեղ եւ ի բարի ճանապարհէն անվեհեր եւ անմոլար առ երկնա(յ)ին եւ խաղաղ նաւահանգիստն Քրիստոսի հասուցանէ: Զոր մաղթեմք յընթերցողացդ, զի ի մաքուր եւ ի սրաթուր յաղաւթս ձեր հանապաղ հայցելով ի վերնատուղէն, զի շնորհեցէ զսա մեզ եւ ամենայն Հայաստան(ե)աց առանց ամենայն փորձանաց՝ ընդ երկայն աւուրս, ամէն, յարամնաբար մնալ մինչեւ ի խոր եւ ի խորին ծերութիւն. եւ յետ աստեացս՝ յաթոռս առաքելոցն եւ ի տաղաւարս մարգարէիցն եւ ի զսոս սուրբ վարդապետացն, եւ զտուեալ տաղանդն իրապէս մատուցէ իւրում Տեառն, բազմապատիկ առաւելութեամբ, եւ զերանա-

կան լսել զձայն՝ թէ «բարի եւ հաւատարիմ ծառայ, որովհետեւ ի սակաւուղ հաւատարիմ դատար, ի վերայ բաղձաց կացուցից զբեղ», յաւելլով ի հինգն ա'յլ եւս հինգ, եւ յերկուսն՝ ա'յլ եւս երկուս: Եւ զուարթացեալ ամենալայնուց աշալըրջութեամբ պայծառ փառաւք ընկալցի ըզրբարիսովն յաղթութեան ընդ ամենայն սուրբս, ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, ընդ որում Հաւր եւ ամենասուրբ Հոգւոյն փառք յաւիտեանս, ամէն:

Եւ զիս զտառապետս Յակովբ, զտակաւ աշխատողս, եւ զամենաբարի զհարազատս իմ զՅովաննէս, զընտիրն ի բեմբականս եւ զանյաղթն յերաժշտականս եւ զանճանձրոյթն ի զբնութեանն (ան)հոնջ, եւ զգովելին յամենայն բարեճեւութեան եւ ըզԳէորդ եւ զծնողն իմ բարի մասին արժանի արարէք՝ յիշմամբ ի Քրիստոս, եւ զուր յիշեալ եղիցիք յողորմութիւն...: Ընդ նմին եւ զամենեւեմնիկ կր(անաւ)որ եւ զբարի հոգի զհայր Յակ(որ), (որ հայ)ր է վանից, եւ զհաւատարիմ եղ(արս) զԴաւիթ եւ զՍարգիս հանդերձ [այլովք] յիշեմք ի Քրիստոս, զկազմող զբ(ոցս):

Եւ զբեցաւ ի ՈՒԼԻ Թուրս, լուսեբանդ եւ հրաշապատում տառս առաքելազիմ մատենիս, բաղձաղան բարութեամբ եւ իմաստութեամբ լցեալ, զոր Տէրն մեր եւ Աստուած վայելել տացէ Տէր Ստեփանոսի՝ մականուն Տիրացու, բաղձում ամաւք խաղաղականաւք, եւ առողջ մնալ հոգւով եւ մարմնով, եւ իւր ժառանգին՝ տէր Սարգսի՝ նորընծայ եպիսկոպոսի, բարի եւ իմաստուն պատենեկի, զոր բնորեաց եւ կացոյց իւր փոխան եւ տեսուչ անապատիս սուրբ իմաստացուծոց եւ ապանայն զոյցից, բա(ղում) եւ պէսպէս պնդութեամբ, կտակաւ... զբով, կամակցութեամբ եւ յաւթ(արութեամբ) եպիսկոպոսաց եւ վարդապետաց եւ համաւկոպոսաց եւ վարդապետաց եւ համաւկոպոսաց (եւ) իշխանաց Շամիրամապատաւորաց (եւ) իշխանաց Ծամիրամապատաւորաց, եւ այլ գեաւղից, եւ... այլ եղեալ զաւրհնութիւնն Աստուծոյ: Եւ ըզնորին հաւառակն, զի որք (կա)մակից եւ

աւղնական լինեն՝ զաւրհնութիւնսն ժառանգեցեն, իսկ որք զիմացելն եւ ի հաւառակութիւնս հատանիցին, այնպիսիքն անիծիւք պատուհասեցին առաջի ահեղ ատենին Քրիստոսի: Այլ զտէր Սարգիս զաւրացուցէ Քրիստոս եւ Եկամուտ արացէ, զի զտէր(ն) շահեցէ եւ զնորին պատուական որդիացեալն, նա եւ զինքն իսկ պիտովին եւ զՔրիստոս՝ զտուրիչն իմաստութեան, եւ նմա փառք այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն, ամէն, ամէն²:

Ի վերջ մատենին

Եւ ընդ աւանդել հոգւոյն տիւ եղեւ. ա'յլ վա'յ հաղար բերանով զյետ մնացեալս, որ զրկեցաք ի քաղցրահոտ աղբիւրէն եւ յորտաճաւալ ճառագայթիցն զի ի մեծի երկշարթոջս խաւարեցաւ (արեգակն) մէտուղիեան... Տէր Ստեփանոս մականունն Տիրացու... Ա. Թու:

Զորբորդ թերթին (էջ 55) ստորեւ մանր զբով կը գտնուի հետեւեալ ծանոթութիւնը. «Տէր Աստուած զբո զանհատ ողորմութիւնդ տուր Միթիթարայ սիրելի եւ հոգեւոր եղբար մերոյ, որ առիթ եղեւ մեկնիս, զի այժմ է ըստ կամաց իմոց»: Նման յիշատակութիւն մ'ալ 274 էջին ըստորեւ. «Պակասեաց նիկոս (մեղան?) առ ի զրել»:

Ի վերջ Յակոբայ թղթոյն մեկնութեան (էջ 90) կայ հետեւեալ յիշատակարանը տարբեր գրչութեամբ. «Տէր Յիսուս, ի քո սոսկալի զախտեանն, ի ծաւալումն ծիածան ճեմարանացն՝ պարծանաց պսակաւն զարդարեալ ի չուք շնորհի անմարմնոցն տեսաւորեալ զսուրբ հայրս մեր ըզՏէր Ստեփանոս»:

Պետրոսի առաջին թղթին աւարտելուն (էջ 192), «Զտէր Ստեփանոս արդիւնա-

² Հմմտ. Զարր. Հայկ. Հին Դպր. Պատմ. էջ 634, Ծն. 1: - Ալիշան, Սիւսեան, 471 բ - Հայագրաբան 443 ա, Ծան. Թիւ 1: Զմայեան, Պատմ. Հայոց, Հտ. Գ. էջ 166, 236 եւ 403:

